

**ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՄԲ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐՈՎ ԲԱՅԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

ՔՈՒՄՈՒՆՏ ՄՀԵՐ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանիանվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախագահ, ԳՊՀ
Էլ. փոստ' mherkumunts@gmail.com

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՊՀ, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ
գիտաշխատող
Էլ. փոստ' lusnersraz@gmail.com

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանիանվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող
Էլ. փոստ' mkrtumyananahit@mail.ru

DOI: 10.24234/scientific.v2i45.96

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է օտար արմատներով բայերի կազմության հարցը՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածքի արաբական ծագմամբ փոխառությունների ուսումնասիրությամբ: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հայերենում բայեր դարձած արաբական ծագմամբ փոխառությունները տարբերվում են մյուս փոխառություններից:

Բանավոր փոխառության ընթացքում քիչ ուշադրություն է դարձվում փոխատու լեզվի քերականական և բառակազմական կաղապարների նշանակությանը: Միայն բառաքննական վերլուծությամբ կարելի է հայտնաբերել փոխատու լեզվի քերականական կամ ածանցական ձևերը: Արաբական ծագմամբ որոշ փոխառություններ անցել են այլ լեզուների միջոցով: Արաբերենից անմիջական կամ

միջնորդությամբ անցած փոխառությունների մեծ մասը բայական հարադրություններ է կազմել: Հավանաբար այդ է պատճառներից մեկը, որ այդպիսիք գիտակցվել են որպես բարբառային փոխառություններ և գրականացման ճանապարհ չեն անցել:

Մի խումբ փոխառություններ հայերենում չունեն իրենց փոխարինողները կամ ամբողջապես չեն արտահայտում հասկացությունը, բայց այդպիսիք նույնպես չեն անցել գրական լեզվին: Նման փոխառությունները կոչվում են *լիակափար*, որ լրացնում են հասկացության արտահայտման բացը փոխառու լեզվում, ինչպես՝ *մոփանաթ*. երախտիք, 2. թախանձանք, 3. պարտքի տակ մնալը» >*minna*(t) مَنَّة >*manna* مَنَّ «բարերարություն, շնորհ»: Իսկ այն փոխառությունները, որոնք փոխառու լեզվում ունեն համանիշ փոխարինողները, կարելի է համարել *մասնակի*, ինչպես՝ *զարար անէ*«վնաս անել»,*զարարու* «վնասակար» < *ضَرَر* (*zarar*) «հաշմանդամ դարձնել»:

Այս ամենով հանդերձ՝ արաբական փոխառությունները վնասակար դեր չեն խաղացել մեր լեզվի մեջ, որևէ կերպ չեն ազդել հայերենի և նրա բարբառների ընդհանուր համակարգին: Ընդհակառակը, դրանք հարստացրել են բառապաշարը անհրաժեշտ հասկացություններով:

Քանակի բառեր՝ արաբերեն փոխառություն, վերլուծական բայ, Սյունիք-Արցախ բարբառային տարածք, բառային փոխառություն, բառային իմաստ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար արմատներով կազմված բայերի քննության ժամանակ տարաբնույթ հարցեր են առաջանում այդպիսի կազմությունները փոխառյալ համարելու կամ չհամարելու վերաբերյալ: Ա. Աբրահամյանը առանձին հոդվածով, ապա «Բայը ժամանակակից հայերենում» գրքում (Աբրահամյան, 1962) գրում է՝ ընդունել թե այդպիսի բայերը ամբողջական փոխառություններ են մեր լեզվում՝ միանգամայն սխալ կլինի (Աբրահամյան, 1962), քանի որ դրանք ստացել են բուն հայկական բայական մասնիկավորում՝ իբրև քերականական-բայակազմական մի ընդհանուր երևույթ հայերենի համար: Այդպիսիք առանձնացնում են «սովորական» փոխառյալներից՝ համարելով «վերակազմական փոխառություններ» կամ «լեզվական-քերականական փոխակերպում՝ փոխատու լեզվի բայական հիմնական ձևույթի օգտագործումով» (Աբրահամյան, 1962): Նույն հարցի քննության շուրջ Լ.

Հովհաննիսյանը «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ առաջարկում է. «ընդհանրապես բայական փոխառությունների հարցը քննելիս անհրաժեշտ է ցուցաբերել պատմական մոտեցում, չսահմանափակվել կարճ ժամանակահատվածի ընձեռած հնարավորություններով: Պատմական մոտեցում ասելով, բնավ նկատի չունենք լեզվաբանության մեջ վաղուց և այժմ էլ շոշափվող՝ սկզբնապես անվանական կամ բայական ձևերի նախորդման ու հաջորդման հարցը» (Հովհաննիսյան, 1990):

Այս հարցին վերջերս անդրադարձել է Հ. Զաքյանը՝ քննության համար փորձանյութ վերցնելով գրաբարի շրջանի պարսկական այն փոխառությունները, որոնցով հայերենում կազմվել են բայեր (Զաքյան, 2015):

Փոխառությունների վերաբերյալ պատմական մոտեցումը հեղինակների կողմից ըմբռնվում է որպես բառույթի՝ փոխատու լեզվում բայական կամ անվանական կազմության ձևը: Եթե հնագույն փոխառությունների առումով երկբայելի, ապա հին և նոր, հատկապես ժողովրդական բնույթի փոխառությունների քննության պլանում հարցը համեմատաբար դյուրին է, քանի որ հիմնականում գործ ենք ունենում կենդանի բառերի հետ, որ առկա են փոխատու և փոխառու լեզուներում: Մի կողմից էլ դժվարություններ են առաջանում միջնորդավորված փոխառությունների պարագայում: Սրանք են հիմնական նախադրյալները, որ պահանջվում են գրական և բարբառային համարվող փոխառությունները ուսումնասիրելիս. մի դեպքում փոխառված արմատները գրականացման ճանապարհ են անցնում, մյուս դեպքում այդպիսիք անհսկելի վիճակում են և մասամբ կամ ընդհանրապես չեն արժանանում գրական ճանաչման:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարցի քննության համար հիմք են հանդիսացել Սյունիք-Արցախի բարբառային տարածքի արաբական ծագմամբ փոխառությունները՝ մասնակի զուգահեռներ անցկացնելով վաղ աշխարհաբարից՝ Խ. Աբովյանի գեղարվեստական արձակում գործածված արևելյան լեզուներից անցած բարբառային բնույթի փոխառություններից (այստեղ կքննենք միայն այն բառերը, որոնք համարվում են արաբական ծագմամբ), որոնցով կազմվել են բայեր (հարադրական և դարձվածքային կապակցությունները ներառյալ)¹:

Բայական մասնիկավորմամբ կամ հարադրական կազմությամբ առկայացած արաբական ծագմամբ փոխառությունները մյուս փոխառություններից տարբերակման հատկանիշներ ունեն՝

1. այդ բառերի հիմնական մասը ունի և՛ անկախ գործածություն, և՛ դառնում է բայական հարադրության անվանական բաղադրիչ,

2. ի տարբերություն թյուրքական և պարսկական փոխառությունների, որոնցում մասամբ հասկացվում են փոխատու լեզվի բայական ցուցիչները կամ բայարմատը, արաբականներում դրանք որպես այդպիսիք չեն ընկալվում,

3. արաբական չմիջնորդավորված փոխառությունների հիմնական մասը վկայվում է միջին հայերենում:

4. վաղ աշխարհաբարին անցած արաբական փոխառությունները հիմնականում անվանական փոխառություններ են կամ ընկալվում են այդպիսին:

Բազմաթիվ փոխառությունների իմաստային և ձևակազմական հատկանիշների ուսումնասիրությունը փոխատու լեզուներում ենթադրել է տալիս, որ դրանք հայերենի խոսակցական տարբերակներում գործառական երկու փուլերով են առկայացել՝

1. նախ փոխառվել են հնչյունական ձևախմբով և իմաստով՝ մասնակի կամ ամբողջական, այսինքն՝ որպես պատրաստի և պարզ կազմություններ, ինչպես *սամթը քիցել* (سمت (samt) «կողմ») «հարմարեցնել»:

¹ Մեր հաշվարկներով Խ. Աբովյանի գեղարվեստական արձակի մեջ գործածված են մոտ 237 փոխառություններով կազմված բայեր, որոնցից 58 պարսկական, 76 թյուրքական, 103 արաբական:

2. հաճախականություն և որոշակի տարածում ստանալուց հետո վերածվել են բայերի կամ բայական բաղադրիչների՝ *իշտահը պահէլ* (شتهاء *(shtah)* «իղծ, ցանկություն») «ախորժակ պահել» և այլն:

Բանավոր փոխառման ընթացքում քիչ ուշադրություն է դարձվում փոխատու լեզվի քերականական և բառակազմական կաղապարների նշանակությանը, դրանք որպես այդպիսին գրեթե չեն ըմռնվում: Երևույթը առավել նկատելի է արաբական այն փոխառություններում, որոնք միջնորդությամբ են անցել կամ ընդհանրապես տարածված են եղել արևելքի լեզուներում: Միայն բառաքննական վերլուծությամբ կարելի է ի հայտ բերել փոխատու լեզվի բառակազմական և քերականական կաղապարները: Վերջիններս արաբական փոխառությունների մեծ մասում ընդհանրապես խոչընդոտ չեն եղել հայերենում բայեր ստեղծելուն, որովհետև արաբական գրեթե բոլոր փոխառությունները դիտվում են որպես պարզ արմատներ, որոնցում մթազնած են քերականական, այլև բառակազմական տարրերը: Նույնը չենք կարող ասել պարսկական և թյուրքական փոխառությունների առումով. կան բառամիավորներ, որոնցում հասկացվում են փոխատու լեզվի մասնիկները կամ ածանցները՝ *դարդ>դարդլամիշ լինել, զահլա>զահլակուշտ լինել, բրիշակ* (պրսկ. *پريشان* (*parišān*)) «1. ցրված, 2. գզգզված, 2. խճճված, մտամոլոր»² *բրշկել* և այլն²:

Ընդունելի է փոխառյալ բաղադրիչներով կազմված բայերին վերաբերող այն տեսակետը, ըստ որի՝ «փոխառություն է ոչ թե բայն ընդհանրապես, այլ համապատասխան արմատը, որ գտնում ենք տվյալ բայածևի մեջ» (Հովհաննիսյան, 1990): Այս կարծիքին հետևելիս, սակայն, նոր հարցեր են առաջանում. օրինակ՝ *խաբար>խաբար տալ, խաբար բերել, խաբրել, խաբարել* ձևերից ո՞րն է փոխառություն, և որը՝ ոչ. *խաբար* բառը խոսքի մեջ կարող է քերականական տարբեր դրսևորումներ ունենալ: Ի՞նչ մոտեցում ցուցաբերել. խոսքից դուրս համարել փոխառություն, շարակարգում՝ ո՞չ:

Ընդհանրապես, կարծում ենք, փոխառյալ նման միավորների միջև որևէ սահմանազատում զերծ չէ հակափաստարկներից, և դրանց՝ մեկը մյուսից

²Բարբառային որոշ օրինակներ, ուսումնասիրության նյութի պահանջով, հանդիպադրել ենք Խ.Աբովյանի երկերում գործածված բարբառային ձևերին (Աբովյան, 1948-1956; Աբովյան, 1984; Աբովյան, 1981):

տարբերակման փորձերը կատարյալ չեն³: Ըստ այդմ էլ՝ որևէ սահմանում չի կարող զանազանելի դարձնել փոխառությունը ոչ փոխառությունից: Հարցի քննության համար օգտակար չէ նաև այն փաստարկը, որ «փոխատու լեզվի բայական միավորը ձևակառուցվածքային էական տարբերություն ունի փոխատու լեզվի համապատասխան միավորի համեմատությամբ՝ իր կազմում ներառելով մայրենի լեզվի ձևույթ, հուշում է, որ բայաձևերը, չպետք է զետեղել փոխառությունների ցանկում: Եթե մենք *աշխատել*-ը համարենք փոխառություն՝ անտեսելով *-ել*-մասնիկը, ապա նույն իրավունքով փոխառյալ միավոր պետք է համարենք *աշխատանք*-ը, *աշխատութիւն*-ը, *աշխատ առնել*-ը» (Հովհաննիսյան, 1990):

Այսպես կարող են ձևավորվել փոխառությունների տարբերակման այլևայլ տեսակետներ, բայց, կարծում ենք, բազմաթիվ հատկանիշներ (հնչյունական, իմաստաբանական, բառակազմական, քերականական և նույնիսկ ոճական), որ կրում են փոխառությունները կամ փոխառյալ բաղադրիչներով բայերը, պահանջում են քննական տարբեր մոտեցումներ: Ճիշտ է նկատված՝ «անվերապահորեն չպետք է ընդունել մեկը և մերժել մյուսը» (Հովհաննիսյան, 1990): Այս ասպարեզում այլ բնույթի հարցեր են առաջանում խոսակցական տարբերակներում առկայացած արաբական ծագմամբ փոխառությունների առումով: Օրինակ՝ հայերենի բառապաշարում ամրակայված հնագույն փոխառություններին հակառակ՝ հին և նոր, արևելյան լեզուներից անցած ժողովրդական համարվող փոխառությունների սովոր մասը հայերենի բայակերտ ածանցներով քիչ կազմություններ ունի: Աշխարհաբարի ձևավորման շրջանում հանդիպող փոխառությունների մեծ մասը բայեր է ստեղծել բառակազմության հարադրական եղանակով: Դա խոսում է այն մասին, որ բառը ենթագիտակցորեն ընկալվել է որպես օտար երևույթ մայրենին կրող հանրության շրջանում, մյուս կողմից՝ հարադրության եղանակը ավելի հեշտ միջոց է բայական հասկացություններ արտահայտելու համար: Այդուհանդերձ, դրանք լեզվի

³ Հստակ չէ նաև օտարաբանություն և փոխառություն հասկացությունների տարանջատումը որևէ օտար լեզվից անցած բառերի շրջակայքում: Խորհրդային շրջանի լեզվաբանության մեջ, օրինակ, Հ. Պետրոսյանի բառարանում այսպիսի սահմանման ենք հանդիպում, որ, կարծում ենք, լեզվական տրամաբանությունից դուրս է. «ԽՄՃՄ ժողովուրդների լեզուներից փոխառյալ բառերը չենք դիտում իբրև «օտար», այլ կոչում ենք «փոխառյալ», իսկ արտասահմանյան լեզուներից փոխառվածները և՛ օտար, և՛ փոխառյալ» (1987, էջ 616):

բառապաշարի մասն են կազմում և հարստացնում հատկապես խոսակցական տարբերակների բայական համակարգը:

Բարբառային միավորներում արաբական ծագմամբ փոխառյալ բաղադրիչներով բայերի քննության հարցը պահանջ է առաջադրում նոր մեկնաբանությունների և հարցադրումների:

Արաբերենից անմիջական կամ միջնորդությամբ անցած փոխառությունների մեծ մասը, ինչպես նշեցինք, բայական հարադրություններ է կազմել, և քիչ են այն բաղադրիչները, որոնք բայական կազմությունից զատված կամ առանձին արմատով հանդես գալ չեն կարող: Հավանաբար այդ է պատճառներից մեկը, որ այդպիսիք գործածության իրենց շրջանում՝ վաղ⁴ և ուշ միջին կամ երկճյուղ աշխարհաբարի ձևավորման ենթաշրջաններում (ըստ Գ. Ջահուկյանի)⁵, գիտակցվել են որպես գավառական կամ բարբառային փոխառություններ և գրականացման ճանապարհ չեն անցել:

Փոխառյալ բառերով հայերենի բայական մասնիկավորում ստացած բայերը *վերակազմական* ձևեր համարելու պարագայում, ենթադրելի է, փոխառությունների շուրջ տարվող քննությունից կարող են դուրս մնալ: Միայն հարադրություններով կազմությունները մեծ թիվ են կազմում՝ *ղա՛լա՛մ ածել* «գրել», *ղա՛լա՛մա՛վ քաշել(ած)* «գեղեցիկ գծվել» > *ղա՛լիմաքաշ* «գծերով զարդարուն», *նա՛լա՛թ անել* «անիծել», *ազափմընալ* «չամուսնանալ», *դիլա՛կ անել* «երազել», *դիլա՛զը առնել* «հասնել երազանքին», *թա՛սիսր անել* «անարգել» < *թա՛սիսր* «պակասություն», *խիալ անել* «կասկածել», *հազ անել* «սիրել, ախորժել, հաճել», *հա՛սրա՛թ մնալ* «կարոտ մնալ», *ղահր քաշել* «հոգսը քաշել» և այլն: Բայական հարադրություններ ձևավորած այս տիպի բառերի հիմնական մասը պահպանում է փոխատու լեզվի իմաստը, հմմտ.՝ *զա՛րա՛ր անել* «վնաս անել», *զարարլո* «վնասակար» < *ضَرَر* (*zarar*) «հաշմանդամել», *թաղադից ընկնել* «ուժասպառ լինել» > *تَكَات* (*takat*) «ուժ, զորություն», *իշարաթ անել* «նշան տալ» < *إِشَارَات* (*isharat*) «ցուցադրել, նշան տալ»), և տարբերվում են միջնորդությամբ անցածներից, ինչպես, օրինակ՝ *փալլի* > *փալլի-փալլիտո՛ւստալ*

⁴ 17-րդ դ. մինչ 19-րդ դ. կեսերը:

⁵ 19-րդ դ. կեսերից մինչ 1920 թ.:

«1.գրավիչձևովխոսել, 2.շատախոսելովհամոզել, 3.համոզել»< فآل (*fal*) «բարի նշան» բառից, հմմտ.՝*փալչի* «բախտագուշակ», թյուրք.*falcı*: Դրանց որոշ մասը իմաստի ծավալման պահանջով ունի նաև բայական հարադրությամբ այլ ձևեր՝ *թա՛սիր* (հավանաբար < تعذيب (*tasib*) «չվիրավորել, չստորացնել» բառից)՝ «պատիվ, արժանապատվություն» >*թա՛սիր քաշել* «արժանապատվությանը տեր կանգնել», *թա՛սիրանել* «պաշտպանել, հավակնել», *թա՛սիրին կաղնել* «սատարել, պաշտպանել» և այլն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

(Արաբական ծագմամբ բառերից ձևավորված բայերի առանձնահատկությունները)

Արաբական ծագմամբ փոխառությունների՝ բարբառային տարածքում ձևավորած առանձնահատկություններից նշենք մի քանիսը՝

1. Արաբերենից անցած որոշ գոյականներից ստեղծված հարադրություններ ներգործական սեռի քերականական իմաստ արտահայտել են *դնել* բայով՝ *հինա*«հինա» >*հինա տրինիլ* «1. ներկել, 2. հինայել», *ղափազ* «վանդակ» >*ղափազ տրինել* «բանտարկել»⁶:

2. Բայական տարբերակների առկայություն, հմմտ.՝*թըլիսմ անել-թըլըսմել* «կախարդել» (*թալիսման*-ը, հավանաբար, պրսկ.փոխառությունէ), *թամահ անել-թըմահել* «ագահել», *խարաբ անել (ինել)-խըրաբել* «փչացնել» >*խըրըբանալ, նամազ անել-նըմազել* «աղոթել» և այլն:

3.Բայական լծորդիչներով ձևավորված պարզ և ածանցավոր բայերի բանավոր խոսքում ունեցած գործածությունը, ինչպես՝ *նալ*՝ «կոշիկի կրունկին խփելու երկաթ», գոյականից է *նալել*՝«կոշիկի տակ նալ խփել», կարծում ենք, պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ ա. այդ փոխառությունները համեմատաբար հին են (բառը արդեն գործածական էր միջին հայերենում (Ղազարյան, Ավետիսյան, 2009), այլև արձանագրվում է «Նոր հայկազեան բառարանում» (Ավետիքեան և այլք, 1981), բ. դրանք այլ կազմություններ ունեն և ըստ էության հաճախական են ու տարածված

⁶ Արաբ. *kafas* (كفص), թուրք. *kafes* «վանդակ»:

⁷ Այս բայն ունի նաև ածանցական տարբերակները՝ *նալնել, նալչել*:

խոսակցական տարբերակներում՝ *աննալ, նալա* և այլն: *Չարզանդ* (ած., գ.)՝ «1. ահարկու, սարսափելի, 2. սոսկում, վախ», բառից միջին հայերենում արդեն ձևավորվել էր *զարզանդել* «վախենալ» բայը: Ինչպես նկատում ենք, բանավոր ճանապարհով անցած բոլոր փոխառությունները չեն, որ բնորոշ են նեղ բարբառային շրջանակին: Դրանց մի մասը ծանոթ է եղել գրաբարին հաջորդած գրական տարբերակին, բայց այսօր դրանք դիտվում են որպես բարբառային կամ գավառական տարբերակներ:

3. Մի խումբ փոխառություններ հայերենում չունեն իրենց փոխարինողները կամ ամբողջապես չեն արտահայտում հասկացությունը, բայց այդպիսիք նույնպես չեն անցել գրական լեզվին: Այդ տիպի փոխառությունները կարելի է անվանել *լիակատար*, որ լրացնում են հասկացության արտահայտման բացը փոխառու լեզվում, և *մասնակի*, որ փոխառու լեզվում ունեն համանիշ փոխարինողները: *Թամահ* (գ.)՝ «1. ցանկություն, տենչ, 2. ազահություն», բառը միջին հայերենում ունի *թամայտարբերակ*: Խ. Աբովյանի արձակում գործածված են՝ *թամահ անել, անթամահ, թամահել*: Թերևս փոխարինելի են *անթամահ-աչքը կուշտ*, այլև՝ սակավապետ, քչասեր, *թամահքար* (պարսկերեն կազմությամբ) «ազահ, աչքածակ, թամահ անող», բայց սրանցից մեկը՝ *անթամահ*, հայերեն ածանցով է, մյուսը՝ *թամահքար*, պարսկերեն: Կարծում ենք, փոխարինելի չէ «էն մեռլի կաշուն ո՞վ *թամահ* կանի, որ նա իր գլուխը տվեց բալբալի» (Խ.Աբովյան) նախադասության **թամահ** բառը, «Ա քընծա՛հէր, բա քու *թամահը*ր *թըմամո՞ւմ* չի» (Գորիսի բարբառ): Իհարկե, կարելի է թարգմանչական հմտություն ցուցաբերել, բայց այստեղ խոսքը առհասարակ հայերեն նախադասության ու իրադրությունը դիպուկ վերարտադրելու մասին է: *Թամահ* բառի՝ հայերենում ունեցած նրբիմաստներից «փափագ»՝ *թամահ անէլ-փափագել*՝ «... ո՞վ կփափագի...» տարբերակը նույն իմաստը չի արտահայտում: Լիակատար չէ նաև *թամահ* բառի «մի բան ունենալու ցանկություն, տենչ» իմաստ-բացատրությունը, այդպես և՛ *թամահ անել* «ազահել»: Լիակատար փոխառություն կարելի է համարել *մո՞ւննաթ* բառը: Այս գոյականն ունի «1. երախտիք, 2. թախանձանք, 3. պարտքի տակ մնալը» իմաստները: Բառը տարածված է արաբ. պրսկ. թյուրք. (արաբ. *minna(t)* مَنَّة > *manna* مَنّ «բարերարություն, շնորհ») լեզուներում: Հայերենին անմիջականորեն անցած

փոխառություն է (օսմ. *minen* (منن), թյուրք. *minnet* «երախտագիտություն», պրսկ. *mennet* (منت) «շնորհ»): Կարծում ենք՝ մո՞ւննա՞թ անէլ, մո՞ւննա՞թ կա՞լ բայական ձևերը ևս չունեն գրական համարժեքները: Հայոց լեզվի հոմանիշների բառարանում առաջինի համար բերվում են «խնդրել», երկրորդի համար՝ «հիշեցնել» իմաստները (Սուքիասյան, 2009), Պ. Բեդիրյանը *մուննաթ անել* բառի դիմաց նշում է «աղաչել», *մուննաթ գալ*՝ «երեսով տալ» (Բեդիրյան, 2011): Է. Աղայանի բառարանում այդ բառով կազմությունները ծավալուն բացատրություններ են ստանում՝ մասնակի ընդգրկելով բառի հասկացության ճիշտ արտահայտությունը. «1. մեկին խնդրելու անախորժություն ունենալ, ստիպված լինել մեկի բարյացակամությունը հայցելու, 2. արած լավությունը երեսով տալ, երախտիքը ավելորդ կերպով հիշեցնել», որ նույն է՝ *մուննաթ գալ* (Աղայան, 1976): Այս բառը փոխառվել է միջին հայերենի շրջանում և բոլորովին այլ բացատրություններով է նշվում՝ «1. «ողորմություն, բարերարություն, լավություն, շնորհ, երախտիք, 2. պարտք, պարտականություն, պարտավորվածություն» (Ղազարյան, Ավետիսյան, 2009): *խարաբ* (ած., գ. > خراب (*harab*) «ավերվածություն»), այստեղից՝ *խըրըբանալ*, *խըրաբէլ*, *խանիխարաբ* «փչացած, ավերված, անպիտան», *խարաբ անէլ*, *խարաբ ինէլ*, *խարաբա* «ավերակ» >*խարաբա անել* ձևերը, կարծում ենք, տեսական շատ հարցեր կարող են հանդիպադրել, բայց, միևնույն է, դրանք խոսակցական բնույթի փոխառություններ են:

4. Միջին հայերենի շրջանից եկող *ղայիմ* (ած., մբ.)՝ «1. հաստատուն, ամուր, 2. ուժգին, ուժով, պինդ», բառից ձևավորվել են հայերենի բայակազմական օրինաչափությամբ բայաձևեր՝ *ղայիմանալ*, *ղայիմացնել*, այլև կազմություններ, որոնք, կարծում ենք, բարբառային տարածքում են ստեղծվել, ինչպես՝ *ղայիմ-ղադըմի լինել* «հաստատուն լինել» (Խ.Աբովյան) և այլն:

5. Հալալ՝ «1. արդար, օրինավոր, 2. արժանի» (>*հալալացնել*) ածականի բարբառային կազմությունն է *հալալ կըթնակէր* «բարոյական, առաքինի» դարձվածքը: Այս և որոշ կազմություններ, որ չնայած ունեն իրենց զուգահեռները միջին հայերենում, աշխարհաբարի գրականության լեզվին անցել են բարբառներից (Խ. Աբովյանի երկերում գործածվում են միայն բարբառային տարբերակներով,

այդպես և *հախ*⁸-ը (ած., գ.)՝ «1. արդար, իրավացի, 2. ճշմարիտ տեղը, ճիշտ պահին, 3. վարձ, արդյունք, աշխատավարձ» >*դարդլամիշ*,(-) *հախլանմիշ ըլիլ*, *վայ հախին*, *վայ նհախին*, *հախիցը գալ*, *հախլանմիշ լինել*«հաշտվել», «միաբանվել», *հախ ու նհախ* «իրավացի-անիրավացի» և այլն:

6. Արևելյան լեզուներից անցած բանավոր փոխառությունների մեծ մասը մնացել է խոսակցական մակարդակում: Նկատելի է, որ կան բարբառային փոխառություններ, որոնց այսօրվա գործածությունը գրական հայերենում վերապահումով է ընդունվում, և առկա է մնում դրանց կարգավիճակը հայերենի բառապաշարի շերտատման համակարգում, ինչպես՝ *հարամ*(ած.)՝ «1. անօրեն, անարդար, 2. փչացած», բառը հաճախ ենք հանդիպում գեղարվեստական երկերում: Բառը արձանագրվում է նաև միջին շրջանի գրական հայերենում: Ոչ միայն Սյունիք-Արցախում, այլև հայերենի մյուս բարբառախմբերում հանդես է գալիս բաղադրյալ տարբեր կազմություններով, ինչպես՝ պարսկերեն *zade*«որդի» բառի հետ (*haramzade*), որը գործածական է նաև թյուրքերենում: Բառը լայն կիրառություն ունի նաև արևելյան մի շարք լեզուներում: Հարամ-ը լայն գործածություն ունի նաև գրականության մեջ (օրինակ՝ Խ. Աբովյանի գործերում այն այլև փոխանվանաբար հանդես է գալիս բազմապիսի ձևերով՝ բայ՝ «*հարամել*», գոյական՝ «*հարամիք*», «*հարամները*» և այլն): Հր. Աճառյանը տալիս է *հարամի* «ավազակ» ձևը, որ հանդիպում է Ուռհայեցու, Տաթևացու և այլոց երկերում (Աճառյան, 1977): Բառը, փաստորեն, համեմատաբար հին փոխառություն է, սակայն լայն գործածություն ստացել է ուշ շրջանում և բազմապիսի դրսևորումներով տեղ գտել արդի հայերենում՝ *հարամ անել*, *հարամություն* և այլն: Արդ՝ բարբառային են, թե՞ գրական *հարամել*, *հարամ անել*, *հարամություն* բառերը, և, ավելին, արդյո՞ք *հարամել* ու *հարամ անել* բայերը փոխառություններ են:

7. Բարբառային համարվող արաբական փոխառություններից նման հարցեր են ձևավորվում նաև *ջահել* (ած., գ.)՝ «1. դեռահաս, անհաս, 2. երիտասարդ, 3. անկիրթ», բառի գործածության շուրջ: Այս բառը տարածված է նաև թյուրքերենում՝ (*cahil* // *cehil* [-hli]>արաբ.(*jāhil*)جَاهِل), հիմնականում «1. տղետ, 2. անգետ»

⁸ Արաբ. *haqq*:

իմաստներով: Հայերենի խոսակցական տարբերակներում գործածվում է «երիտասարդ» իմաստով⁹: Հին հայերենի շրջանում պարսկերենից անցած *երիտասարդ* (< երիտասարդանայ) հոմանիշը ընդունվում է գրական, միջին գրական հայերենից եկող *ջահեւ*-ը (< ջրհիւլանայ) և նրանով արդեն ձևավորված շատ բառեր, որ տարածված են հայերենում, համարվում են բարբառայնություններ, այդպես և խոսակցականում՝ *ջահելանայ*, *ջահելացնել*, *ջահել դառնայ* և այլն:

Միջին հայերենի շրջանից *նաղդ* (գ., ած, մբ.)՝ «կանխիկ, առձեռն», բառը հայերենի խոսակցական տարբերակների մեծ մասում գործածական է նաև *նաղդե* «կանխիկացնել» ձևով: Հետաքրքրական է՝ որոնք են բառի՝ գրականացման ճանապարհից հետ պահվելու տվյալները:

8. Արևմտահայ գրական լեզուն պահպանել է *խաբար* բառի կազմություններ՝ *խապրել*, *խապրիկ* (Սաքապետոյան, 2011). այն արևելահայ բարբառներում բավականին տարածված և հաճախականություն ունեցող բառերից է՝ *խաբար* (գ.)՝ «լուր» >*խաբարտալ*, *խաբար բերել*, *խաբրել*, *խաբարել*, Սյունիք-Արցախում՝ *խաբարբիզան* և այլն: Անշուշտ, մենք նույնպես կողմ ենք նրան նույնանիշ *լուր* բառին գործածական լայն հնարավորություն տալուն, բայց արդյոք ճիշտ են ընտրված հայերենի գրական բառապաշարին անցնող բառերի շուրջ ձևավորված մոտեցումները այս և նմանատիպ փոխառյալ բաղադրիչների առումով¹⁰: Նման փոխառությունները գրական լեզվում չյուրացնելու պատճառներից մեկն էլ (Մարության, 1997) գուցե այն է, որ այդպիսիք տարածված են նաև արևելյան լեզուներում (Վարդանյան, 2016): Այս կերպ առկա է մնում նաև նման բառերի հարցը՝ *շուլալ* (գ.) «ձեռնակարի տեսակ» >*շուլալել*, *շուլալվել*, *չաղ* (ած.) «1. գեր, պարարտ, 2. հարուստ, ունևոր, 3. բարկ¹¹, ուժեղ, բորբ» >*չղղանայ*, *չաղ անել*¹² և այլն:

⁹ Բնագրային որոշ օրինակներ Խ.Աբովյանից՝ «...*հրեշտակ սիրելի ջահել հարսները...*» (Թ.Ն.Ն. 40), «*ջահելություն*» (Վ.Ն. 26), «...*մեկ ջահել մարդ...*» (Պ.Տ. 119), «...*ջահել ժամանակը...*» (Ֆ. 250) և այլն: «Տգետ» իմաստով գործածություն հայերենում մեզ չի հանդիպել:

¹⁰ Եվ դա այն պարագայում, երբ հայ գրականության հեղինակների գրեթե մեծ մասն այս և նման բնույթի բառերն անկաշկանդ գործածում է գեղարվեստական խոսքում:

¹¹ *Գրակը չաղ անել*:

¹² Խ.Աբովյանի արձակում նաև՝ *դամաղը չաղ* «գոհ», :

9. Արաբական փոխառություններից առաջացած բայեր կան, որոնք հանդես են գալիս միայն կրավորաձև, ինչպես՝ *սախաթ* (գ., ած.)՝ «խեղանդամ», այստեղից՝ *սըխաթվել* «1. խեղվել, 2. հաշմանդամ դառնալ»¹³:

10. Կան բառեր էլ, որոնցից բայեր համեմատաբար ուշ են ձևավորվել, և այդպիսիք չեն հանդիպում Խ. Աբովյանի արձակում, ինչպես՝ *սապոն* > *սապոնել* (Գոր. Արց. և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հայերենի բանավոր և գրավոր ճանապարհով անցած փոխառությունների ուսումնասիրությունը տարբեր մոտեցումներ է պահանջում:

Հայերենի խոնարհիչներ ստացած, հարադրավոր բայերի անվանական բաղադրիչ կազմած արաբական ծագմամբ փոխառությունները մյուսներից ունեն տարբերակման հատկանիշներ, որոնցից մեկն էլ այն է, որ դրանք համեմատաբար հին են, վկայվում են միջին հայերենում: Կարծում ենք, որ արաբերենից անցած փոխառությունները նախ անցել են անվանական ձևերով, ապա հետագայում բայական բաղադրիչի հետ հաճախական գործածությամբ ընդգրկվել են բայ խոսքի մասի կազմում:

Արաբերենից անցած փոխառությունների մեծ մասը հանդիպում է թյուրքերենում և պարսկերենում: Հնարավոր է, որ դրանց որոշ մասը միջնորդությամբ է անցել հայերենին, որոնք, այնուամենայնիվ, սահմանազատվում են հնչյունական, ձևակազմական և իմաստային հատկանիշների վերլուծությամբ:

Արևելյան լեզուներից անցած ժողովրդական բնույթի փոխառությունների (այդ թվում՝ արաբական), մեծ մասը հայերենի բայակերտ ածանցներով քիչ կազմություններ ունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբովյան, Խ. (1983). *Երկեր*. Երևան, Սովետական գրող հրատ.

Աբովյան, Խ. (1956). *Երկերի լիակատար ժողովածու* (Vols. 1–8). Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.

Աբովյան, Խ. (1981). *Վերք Հայաստանի*. Երևան, ԵՊՀ հրատ.

¹³ Արաբ. *sakat*(سَقَطَ) «թուլլ, տկար» բառից:

- Աբրահամյան, Ա.** (1962). *Բայր ժամանակակից հայերենում* (Vol. 1). Երևան, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատ.
- Աբրահամյան, Ա.** (1962). Փոխառությունների հետ կապված բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում. Տեղեկագիր Հասարակական Գիտությունների, 7–8, 115–128.
- Աղայան, Է. Բ.** (1976). *Արդի հայերենի բացադրական բառարան* (Vol. 2). Երևան, «Հայաստան» հրատ.
- Աճառյան, Հ.** (1977). *Հայերեն արմատական բառարան*. ԵՊՀ հրատ.
- Աւետիքեան, Գ., Սիրմէլեան, Խ., Աւգերեան, Մ.** (1981). *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (Vol. 2). Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու.
- Բեդիրյան, Պ. Ս.** (2011). *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացադրական բառարան*. Երևան, ԵՊՀ հրատ.
- Զաքյան, Հ.** (2015). Ե լծորդության՝ պարզ բայահիմքով կրկնասեռ բայերը Աստվածաշնչում. Հայագիտական Հանդես, 2(30), 3–15.
- Հովհաննիսյան, Լ.** (1990). *Հայերենի իրանական փոխառությունները*. Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.
- Ղազարյան, Ռ. Ս., Ավետիսյան, Հ. Մ.** (2009). *Միջին հայերենի բառարան*. Երևան, ԵՊՀ հրատ.
- Մարության, Ա.** (1997). Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ. Պատմա-բանասիրական Հանդես, 2, 111–118.
- Պետրոսյան, Հ.** (1987). *Հայերենագիտական բառարան*. Երևան, «Հայաստան» հրատ.
- Սաքապետոյան, Ռ., Կ.** (2011). *Արեւմտահայերեն-արեւելահայերեն նոր բառարան*. Երևան, Տիգրան Մեծ հրատ.
- Սուքիասյան, Ա. Մ.** (2009). *Հայոց լեզվի հոմանիշների բացադրական բառարան*. Երևան, ԵՊՀ հրատ.
- Վարդանյան, Ա.** (2016). Ղարաբաղի բարբառում նոր իրանական որոշ փոխառությունների շուրջ. Արևելագիտության Հարցեր, 12, 273–280.

REFERENCE LIST

- Abovyan, H.** (1983). *Sbornik(Collection)*: Erevan, sovetskij pisatel' izd.
- Abovyan, H.** (1956). *Polnoe sobranie sbornik (Complete collection of countries)*.(toma 1–8). Erevan, Armyanskaya SSR GA izd.
- Abovyan, H.** (1981). *Rany Armenii(Wounds of Armenia)*. Erevan, izd. EGU.
- Abramyan, A.** (1962). *Glagol v sovremennom armyanskom yazyke (Verb in Modern Armenian)* (t. 1). Erevan, Armyanskaya SSR GA izd.
- Abramyan, A.** (1962). Nekotorye yavleniya glagolobrazovaniya, svyazannye s zaimstvovaniyami v sovremennom armyanskom yazyke(*Some Phenomena of Verb-Formation Associated with Borrowings in Modern Armenian*).Byulleten' social'nyh nauk, 7-8, 115-128.
- Agayan, E. B.** (1976). *Tolkovyj slovar' sovremennogo armyanskogo yazyka (Explanatory dictionary of modern Armenian language)*. (Tom 2). Erevan, "Ajastan" izd.
- Acharyan, H.** (1977). *Armyanskij radikal'nyj slovar (Armenian radical dictionary)*. Press-sluzhba EGU.
- Avetikyan G., Surmelyan H., Augeryan M.** (1981). *Novyj slovar' hajkazyanskogo yazyka (New Haykazyan Dictionary)*. (Tom 2). Veneciya, Tipografiya sv. Lazarya.
- Bediryan, P. S.** (2011). *Obshirnyj tolkovyj slovar' armyanskih fraz(An extensive explanatory dictionary of Armenian phrases)*. Erevan, izd. EGU.
- Zakyan, H.** (2015). *Dvurodnye glagoly v Biblii s prostoj glagol'noj osnovoj(Bilingual Verbs in the Bible with a Simple Verb Stem)*. *Armenovedcheskij zhurnal*, 2(30), 3-15.
- Ovannisyan, L.** (1990). *Iranskie zaimstvovaniya armyanskogo yazyka(Iranian loanwords of Armenian)*. Erevan, Armyanskaya SSR GA izd.
- Kazaryan, R. S., Avetisyan G. M.** (2009). *Slovar' srednearmyanskogo yazyka(Dictionary of Middle Armenian)*. Erevan, izd. EGU.
- Marutyan, A.** (1997). *K voprosu o slovesnyh zaimstvovaniyah i chistote yazyka (K voprosu o slovesnyh zaimstvovaniyah i chistote yazyka)*. *Istoriko-filologicheskij zhurnal*, 2, 111-118.

- Petrosyan, H.** (1987). *Armyanskij slovar'(Armenian dictionary)*. Erevan, gazeta «Ajastan».
- Sakapetoyan R., K.** (2011). *Novyj zapadnoarmyanskij-vostochnoarmyanskij slovar'(New Western Armenian-Eastern Armenian Dictionary)*. Erevan, Tigran Mec izd.
- Sukiasyan, A. M.** (2009). *Tolkovij slovar' sinonimov armyanskogo yazyka (Tolkovij slovar' sinonimov armyanskogo yazyka)*. Erevan, izd. EGU.
- Vardanyan, A.** (2016). *Nekotorye novye iranske zaimstvovaniya v karabahskom dialekte(Some new Iranian borrowings in the Karabakh dialect)*. *Voprosy vostokovedeniya*, 12, 273–280.

ABSTRACT

SOME THEORETICAL AND APPLIED PROBLEMS OF VERBS WITH BORROWINGS OF ARABIC ORIGIN

KUMUNZ MHER, NERSISYAN LUSINE, MKRTUMYAN ANAHIT

The article discusses the issue of the composition of verbs with foreign roots, with the study of borrowings of Arabic origin in the dialectal area of Syunik-Artsakh. It becomes clear that the borrowings of Arabic origin, which have become verbs in the Armenian language, differ from other borrowings.

Little attention is paid to the meaning of the grammatical and lexical patterns of the borrowed language. Some borrowings of Arabic origin have passed through other languages. Most direct or indirect borrowings from Arabic are formed by analytic verbs.

The group of borrowings does not have its substitutes in the Armenian language, but they did not pass into the literary language either. Borrowings of this type are called complete if they fill a gap in the expression of a concept in a borrowed language, e.g., *munnat* (մոննատ) "1. gratitude, 2. envy, 3. duty" > *minna(t)* مَنَّة > *manna* مَن "mercy, mercy". And those borrowings that have synonymous substitutes in a borrowed language can be considered partial, such as *zarar anel* (զարար անէլ) "harm", *zararlu* (զարարլու) "harmful" < *zarar* ضَرَر "disable".

Arabic borrowings did not affect on the general structure Armenian and its dialects. They enriched the vocabulary with the necessary concepts.

Key words: Arabic borrowing, analytical verb, Syunik-Artsakh dialect area, verbal borrowing, verbal meaning.

РЕЗЮМЕ

О НЕКОТОРЫХ ТЕОРЕТИЧЕСКИХ И ПРИКЛАДНЫХ ПРОБЛЕМАХ ГЛАГОЛОВ С ЗАИМСТВОВАНИЯМИ АРАБСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

КУМУНЦ МГЕР, НЕРСИСЯН ЛУСИНЕ, МКРТУМЯН АНАИТ

В статье рассматривается вопрос состава глаголов с иностранными корнями, с изучением заимствований арабского происхождения в диалектном ареале Сюнико-Арцах. В результате исследования становится ясно, что заимствования арабского происхождения, ставшие глаголами в армянском языке, отличаются от других заимствований.

При устном заимствовании мало внимания уделяется значению грамматических и лексических моделей заимствованного языка. Некоторые заимствования арабского происхождения перешли через другие языки. Большинство прямых или опосредованных заимствований из арабского языка имеют глагольные отношения. Вероятно, это одна из причин того, что такие слова были признаны диалектными заимствованиями и не перешли в литературный язык.

Некоторые заимствования не имеют своих заменителей в армянском языке или не полностью выражают понятие, но и в литературный язык они не перешли. Заимствования такого типа можно назвать *полными*, которые восполняют пробел в выражении понятия в заимствованном языке, например **муннат** (մոռումնասիր) «1. благодарность, 2. зависть, 3. Долг» > минна(т) > منّة > манна, «милосердие, благодать». А те заимствования, которые имеют синонимичные заменители в заимствованном языке, можно считать *частичными*, как, например, **зарар анел** (զարար անել) «вредить», **зарарлу** (զարարլու) «вредный» << ضَرَر (zarar) «выводить из строя».

Несмотря на это, арабские заимствования не сыграли вредной роли в нашем языке, они никак не повлияли на общий строй армянского языка и его диалектов. Они обогатили словарный запас необходимыми понятиями.

Ключевые слова: арабское заимствование, аналитический глагол, сюникско-арцахский диалектный ареал, лексическое заимствование, лексическое значение.

Հոդվածը ստացվել է՝ 30.05.2023

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 04.06.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 05.08.2023